10	Ջրավազան 50 մ ³		6		0	0
11	Ջրավազան 100 մ ³		7		0	0
12	Կենտրոնական ճանապարհ		8		0	0
13	Ճանապարհ զին պահեստ		9		0	0
14	Ճանապարհ կենտրոնական բազա		10		0	0
15	Էլ. ենթակայան		11		0	0
16	Էլ ենթակայան 0.4 ԿՎԱ ցանց		12		0	0
17	Ներհամայնքային ճանապարհ	2011	13		0	0
18	Ներհամայնքային ճանապարհ	2012	14		0	0
19	Գերեզմանոցի պարիսպ	2012	15		0	0
20	Ներհամայնքային ճանապարհ	2014	16		0	0
21	Ներհամայնքային ճանապարհ	2016	17		0	0
Փոխանցող հարմարանքներ						
22	Օդային էլ. Գիծ		1		0	0
23	Բարձր լարման էլ. Գիծ		2		0	0
24	Ցածր լարման էլ. Գիծ		3		0	0
25	Ֆիլտրային հորեր		4		0	0
26	Արտաքին լուսավորություն	2011	6		0	0
Կահույք						
27	Գրապահարան		2		0	0
28	Գրապահարան 5 դարակ		3		0	0
29	Ցուցատախտակ		4		0	0
30	Գրասեղան		5		0	0
31	Սեղան դիմադիր		6		0	0
32	Հեռախոսի տակդիր		7		0	0
33	Աթոռ փափուկ		9		0	0
34	Խորհրդակցության սեղան		8		0	0
35	Համակարգչի սեղան		10		0	0
36	Չիրկիզվող պահարան		1		0	0
37	Գրասեղան 1.2		14		0	0

38	Գրասեղան 1.1		15		0	0
39	Աթոռ պտտվող		11		0	0
40	Հեռուստացույցի կանգնակ		12		0	0
41	Հատակի ծածկոց		13		0	0
42	Գրասեղան		16		0	0
43	Գրապահարան		17		0	0
Համակարգչային տեխնիկա						
44	Համակարգիչ		1		0	0
45	Համակարգիչ Պ4		3		0	0
46	Համակարգիչ		6		0	0
47	Համակարգիչ		7		0	0
48	Համակարգիչ Qore 2Q8400		9		0	0
49	Համակարգիչ Intel DC5700		12	3128C292-8A2341	0	0
50	Համակարգիչ Intel Core I32100		13	3103C596-0397	0	0
51	Համակարգիչ DC 5700		14	Q138B896-7A0502	0	0
52	Մոնիտոր		5		0	0
53	Մոնիտոր Samsung		8		0	0
54	Մոնիտոր Benq 71		2		0	0
55	Մոնիտոր Samsung B2030		10	LS20PUZKFV/XT	0	0
56	Մոնիտոր samsung 20A300		15	ZSKBH9LBB06350	0	0
57	Xerox faser3117		4		0	0
58	Տպիչ սարք Canon 4010		9		0	0
59	Պրինտեր Xerox 3100 MFP /S		16	2807622091	0	0
60	Պրինտեր Canon MF3010			5252B004WCY45494	0	0
61	Ցանցային կոնցենտրատոր TPLINK		17	TL-WR740N/TL-WR741ND	0	0
62	Սնուցման սարք		18		0	0
63	Անխափան սնուցման սարք 650VA		20		0	0
64	Անխափան սնուցման սարք 850VA		21		0	0
65	Անխափան սնուցման սարք 850VA		22		0	0
66	Անխափան սնուցման սարք 850VA		23	150514E0850N00975	0	0

67	Հեռուստացույց	2015	24	MBM64176659 (1504-REV00-FX)	0	0
68	Տեսահսկման համակարգ		19		0	0
69	Ազդանշանային համակարգ LC-1000L		25	RINS727-4	0	0
Այլ հիմնական միջոցներ						
70	Էլ Տաքացուցիչ		2		0	0
71	Էլ Տաքացուցիչ		3		0	0
72	Կախիչ LEOSTER		4	MBM64176659 (1504-REV00-FX)	0	0
73	Էլ Տաքացուցիչ 2000W		5	26453	0	0
74	Գոտեվորման սխեմա		1		0	0
75	Պարզեցված գլխավոր հատակագիծ		6		0	0
76	Տոնածառ		7		0	0
Ընդամենը					0	0

Գլխավոր հաշվապահ


(ստորագրություն)

Տ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Գույքագրման արդյունքների հետ ծանոթացել եմ՝
նույնպես ամսական հաշվառման ամսական

Աշխատակազմի քարտուղար


(ստորագրություն)

Ա. ԶԱԲԱՐՅԱՆ



Ձև Գ-25

ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Գույքագրման արդյունքների տեղեկագիր N01


Գույքագրման անցկացման հրամանի համար և ամսաթիվը N 11 29.10.2016

Գույքագրումն սկսելու ամսաթիվը 01.11.2016

Գույքագրումն ավարտելու ամսաթիվը 30.12.2016

	Ակտիվի (պարտավորության) հոդվածի անվանումը	Հաշվի համարը	Գույքագրման փաստացի արդյունքները		Գույքագրման արդյունքները վերատեսակավորումից հետո	
			ավելցուկ (քանակը)	պակասորդ (քանակը)	ավելցուկ (քանակը)	պակասորդ (քանակը)
1	Պաշարներ (այդ թվում փոքրաթեք կամ արագամաշ առարկաներ)		0	0	0	0
2	Հիմնական միջոցներ		0	0	0	0
3	Ներդրումային գույք		-	-	-	-
4	Ոչ նյութական նակտիվներ		-	-	-	-
5	Կենսաբանակ անակիվներ		-	-	-	-
6	Չարտադրված (բնական ծագում ունեցող) նյութական ակտիվներ		-	-	-	-
7	Բարձրարժեք ակտիվներ		-	-	-	-
8	Կոնցեսիոն ակտիվներ		-	-	-	-
9	Բաժնային գործիքներ		-	-	-	-
10	Ձեռք բերված պարտատոմսեր		-	-	-	-
11	Տրամադրված փոխառությունների և պակասներ		-	-	-	-
12	Վաճառքների գծով դեբիտորական պարտքեր և ստացման ենթական այլ գումարներ		0	0	0	0
13	Թողարկված պարտատոմսեր		-	-	-	-
14	Ստացված վարկերի և փոխառությունների		-	-	-	-
15	Մատակարարումների գծով կրեդիտորական պարտքեր և վճարման ենթական այլ գումարներ		0	0	0	0
16	Բյուջեի հետ հաշվարկներ		-	-	-	-
17	Կանխիկ դրամական միջոցներ		0	0	0	0
18	Ստացված վարկեր և փոխառություններ		-	-	-	-
19	Խիստ հաշվառման փաստաթղթեր		0	0	0	0


Ղեկավար



Գլխավոր հաշվապահ



Գույքագրման հանձնաժողովի նախագահ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հունվարի 2017 թվականի N 04

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի
N 50 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2016 թվականի դեկտեմբերի 12-ի «Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին» N 50 որոշման 1-ին կետում «62.06» թիվը փոխարինել «47» թվով:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱԶԱՏՈՒՐ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
3. ԽԱԶԱՏՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հունվարի 2017 թվականի N 05

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 51 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2016 թվականի դեկտեմբերի 12-ի «Կոտայքի մարզի Նոր Արտամետի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 51 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱԶԱՏՈՒՐ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
3. ԽԱԶԱՏՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐ՝  ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ





ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Նոր Արտամետի համայնքապետարանի աշխատակազմի

Աշխատակիցների թվաքանակը՝ 8

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	Հաստիքային միավորը	Դրույքը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Համայնքապետարանի աշխատակազմ	Համայնքի ղեկավար	Քաղաքական		1	1	310858			310858
2		Համայնքի ղեկավարի տեղակալ	Հայեցողական		1	1	150000			150000
3		Աշխատակազմի քարտուղար	Համայնքային ծառայության	1.2-1	1	1	155000			155000
4		Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-1	1	1	150000			150000
5		1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-1	1	1	115000			115000
6		1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-2	1	1	115000			115000
7		1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-3	1	1	115000			115000
8		Հավաքարար	Տեխնիկական սպասարկման		1	1	75000			75000
	Ընդամենը				8		1185858			1185858



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հունվարի 2017 թվականի N 06-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 52-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների՝ համայնքի ավագանին **որոշում է**.

- Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2016 թվականի դեկտեմբերի 12-ի «Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 52-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
- Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

- ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
- ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
- ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
- ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻԿ

(Handwritten signatures of the council members)

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐ՝ *(Signature)* **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**





1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

- 1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ **7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ.**

- 2) սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **15000 /տասնհինգ հազար/ դրամ.**

բ. 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **25000 /քսանհինգ հազար/ դրամ.**

գ. 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **25000 /քսանհինգ հազար/ դրամ.**

դ. 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **50000 /հիսուն հազար/ դրամ.**

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

- 3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ.**

- 4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.**

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

- 1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր

մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ.**

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «1» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է **2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.**

4. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

1) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **5000 /հինգ հազար/ դրամ.**

2) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **6500 /վեց հազար հինգ հարյուր/ դրամ.**

3) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **10000 /տասը հազար/ դրամ**

4) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **12500 /տասներկու հազար հինգ հարյուր / դրամ.**

5) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **22500 /քսաներկու հազար հինգ հարյուր/ դրամ.**

6) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **50000 /հիսուն հազար/ դրամ.**

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- 1) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **5000 /հինգ հազար/ դրամ.**
- 2) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **6500 /վեց հազար հինգ հարյուր/ դրամ.**
- 3) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **10000 /տասը հազար/ դրամ.**
- 4) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **12500 /տասներկու հազար հինգ հարյուր / դրամ.**
- 5) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **22500 /քսաներկու հազար հինգ հարյուր/ դրամ.**
- 6) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **50000 /հիսուն հազար/ դրամ.**

5. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար **200 /երկու հարյուր/ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.**

6. Համայնքի վարչական տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է՝

- 1) առևտրի օբյեկտների համար՝ **25000 /քսանհինգ հազար/ դրամ.**
- 2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **50000 /հիսուն հազար/ դրամ.**
- 3) բաղնիքների (սաունաների) համար՝ **250000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.**
- 4) խաղատների կազմակերպման համար՝ **500000 /հինգ հարյուր հազար/ դրամ.**
- 5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ **250000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.**
- 6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ **75000/ յոթանասունհինգ հազար/ դրամ.**

7. Համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- 1) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.**

- 2) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **5000 /հինգ հազար/ դրամ.**
- 3) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ.**
- 4) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **10000 /տասը հազար/ դրամ.**
- 5) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **15000 /տասնհինգ հազար/ դրամ.**
- 6) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **25000 /քսանհինգ հազար/ դրամ.**

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- 1) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **500 /հինգ հարյուր/ դրամ.**
- 2) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **1000 /մեկ հազար / դրամ.**
- 3) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **2000 /երկու հազար / դրամ.**
- 4) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **4000/ չորս հազար/ դրամ.**
- 5) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **7500 / յոթ հազար հինգ հարյուր/ դրամ.**
- 6) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **12500 /տասներկու հազար հինգ հարյուր/ դրամ.**

8. Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ **25000 /քսանհինգ հազար/ դրամ.**

9. Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար , յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

- 1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **2000 /երկու հազար/ դրամ.**
- 2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **3500 /երեք հազար հինգ հարյուր/ դրամ.**
- 3) այլ արտաքին գովազդի համար՝ **1500 /հազար հինգ հարյուր/ դրամ.**
- 4) դատարկ գովազդային վահանակների համար՝ **700 /յոթ հարյուր/ դրամ.**
- 5) Սոցիալական գովազդի համար՝ **0 /զրո/ դրամ.**

10. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հողուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում

հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է **45 000 / քառասունհինգ հազար/ դրամ.**

11. Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի , սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **100 000 /մեկ հարյուր հազար/ դրամ.**
12. Համայնքի Հանրապետության համայնքների խորհրդանիշները (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար **50000 /հիսուն հազար/ դրամ.**
13. Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է **7500 /յոթ հազար հինգ հարյուր / դրամ.**
14. Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է **250000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.**
15. Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝
 - 1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **2000000 /երկու միլիոն / դրամ.**
 - 2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **3750000 /երեք միլիոն յոթ հարյուր հիսուն հազար/ դրամ.**
 - 3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **5250000 /հինգ միլիոն երկու հարյուր հիսուն հազար / դրամ.**
 - 4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **7500000 /յոթ միլիոն հինգ հարյուր հազար / դրամ.**

Համայնքի վարչական տարածքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **2000 /երկու հազար/ դրամ.**
2. ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը)

կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման **2000 /երկու հազար/ դրամ**։

3. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **1500 /հազար հինգ հարյուր/ դրամ**։
4. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ **5000 /հինգ հազար/ դրամ**։
5. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար՝
Հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ **ամսական 150 /մեկ հարյուր հիսուն/ դրամ**։
6. Շինարարական և խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար՝ **1000 /մեկ հազար/ դրամ**։
7. Աճուրդի կազմակերպման փաստաթղթերի նախագծերի տրամադրման վճար՝ **5000 /հինգ հազար/ դրամ**։
8. համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար փոխհատուցման վճար՝ **1000 /մեկ հազար/ դրամ**։



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հունվարի 2017 թվականի N 07-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 53-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ համայնքի ավագանին
որոշում է.

1. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2016 թվականի դեկտեմբերի 12-ի
«Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին»
N 53-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ
օրը:

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱԶԱՏՈՒՐ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
3. ԽԱԶԱՏՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Տողը		ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ	Նախնական /հազար դրամ/	Փոփոխու- թյունը + / -	Վերջնական /հազար դրամ/
1131		Տեղական տուրքեր	215.0	+45.0	260.0
1331		Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ	400,0	-100,0	300,0
1353		տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար	500.0	+250.0	750.0
8194		Տարեսկզբի ազատ մնացորդ	0,0	+1757.125	1757.125
Ծրագիր	Հոդվածը	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախնական /հազար դրամ/	Փոփոխու- թյունը + / -	Վերջնական /հազար դրամ/
6-4-1	4212	Էներգետիկ ծառայություններ	1000,0	+195,0	1195,0
8-2-4	5122	Վարչական սարքավորումներ	1000.0	+1000.0	2000.0
11-1-2	4891	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ /ֆոնդային բյուջե/	1000.0	+757.125	1757.125



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հունվարի 2017 թվականի N 08

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթների՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Նոր Արտամետ համայնքի սեփականություն հանդիսացող 0101-0069 ծածկագրի 0.113 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարել Վիլիկ Վարազդատի Հովհաննիսյանին և Ռիտա Հայրապետի Հովհաննիսյանին՝ նրանց սեփականության իրավունքով պատկանող 101-002 ծածկագրի 0.19 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի ընդլայնման համար:

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0


1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱԶԱՏՈՒՐ

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ

3. ԽԱԶԱՏՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

4. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

201 p

3wugt

ՆԱԽԽԵՐԱԿԱՆ ԳՐԱԹՅՈՒՆ

Շրջադարձային (բեկման) կետեր	Կորդինատները		Գծային չափերը (մետր)
	Y	X	
1	8461532.20	4463237.36	14.92
2	8461538.29	4463250.99	132.29
3	8461498.16	4463377.04	1.70
4	8461499.77	4463377.59	148.82
5	8461554.56	4463239.22	6.16
6	8461556.48	4463233.36	24.60
1	8461532.20	4463237.36	